Ընթերցանության նպատակը

Չելսի Մորթենսեն
(Հիմնված է իրական պատմության վրա)

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

Անդերսը լսում էր, թե ինչպես է քույրը կարդում՝ սուրբ գրությունների ընտանեկան ուսումնասիրության ժամանակ: Նա փորձում էր հետևել իր գրասալիկի վրա: Բայց դժվար էր կենտրոնանալ բառերի վրա:

Անդերսը միշտ դժվարանում էր կարդալ: Անցյալ տարի պարզվեց, որ նա դիսլեքսիա ունի: Դիսլեքսիան այնպիսի խանգարում է, որի դեպքում մարդը դժվարանում է կարդալ: Նրա ուղեղը խառնում էր բառերն ու տառերը, իսկ աչքերը չէին կենտրոնանում, երբ փորձում էր կարդալ:

Նրա քույրն ավարտեց հատվածի ընթերցումը, ապա եղբայրը կարդաց հաջորդ հատվածը: Բայց Անդերսը չկարդաց: Նա չէր սիրում բարձրաձայն կարդալ: Երբ բառերը խոշորացնում էր գրասալիկի վրա, մի փոքր ավելի հեշտ էր դառնում: Բայց նա ատում էր այն հանգամանքը, որ ինքը դանդաղ ու անվարժ էր կարդում: Նա այնքան շատ սխալներ էր անում: Նա պետք է շատ քրտնաջան աշխատեր մի բանի վրա, ինչը բոլորի մոտ շատ հեշտ էր ստացվում:

Կարդալուց հետո Անդերսի ընտանիքը տեսանյութ դիտեց: Տեսանյութը երեխաների և երիտասարդների ծրագրի մասին էր:

«Անձնական նպատակներ դրեք, որոնք մարտահրավեր են ձեզ համար և խրախուսում են ձեզ կատարելագործվել»,- ասաց երեց Գոնգը տեսանյութում: «Բացահայտեք նոր տաղանդներ, հետաքրքրություններ և հմտություններ»:*

Անդերսը մտածեց նպատակների մասին, որոնք կարող էր դնել: Միգուցե նա կարող էր սովորել թխվածքաբլիթներ թխել: Կամ ավելի լավ խաղալ ֆուտբոլ:

*Դեմ առ դեմ երեց Ջերիթ Վ. Գոնգի հետ (համաշխարհային հեռարձակում, 17 նոյեմբերի 2019 թ.), Ավետարանի գրադարան:

Հետո նա նայեց սեղանին դրված Մորմոնի Գրքին: Կարդալու ունակությունը զարգացնելու նպատակը հաճելի զբաղմունք չէր թվում: Բայց նա ցանկանում էր սուրբ գրություններ կարդալ իր ընտանիքի հետ:

«Ես գիտեմ, թե ինչ նպատակ եմ ուզում ունենալ»,- ասաց նա հայրիկին:

«Եվ ո՞րն է դա»,- հարցրեց հայրիկը:

Անդերսը վերցրեց Մորմոնի Գիրքը: «Ես ուզում եմ ամեն օր բարձրաձայն կարդալ Մորմոնի Գրքից մի հատված»:

«Հրաշալի նպատակ է»,- ասաց հայրիկը: «Ե՞րբ ես ուզում սկսել»:

«Հենց հիմա»:

Անդերսը գնաց իր սենյակ և փակեց դուռը: Նա չէր ուզում, որ որևէ մեկը լսեր իրեն: Ապա նա բացեց իր Մորմոնի Գիրքը: Նա խառնեց բառերից մի քանիսը, բայց նրանից ընդամենը մեկ րոպե պահանջվեց առաջին հատվածը կարդալու համար: *Այդքան էլ վատ չէր*, - մտածեց նա:

Անդերսն ամեն օր սուրբ գրություն էր կարդում: Դա շատ դժվար էր: Նա նաև չէր զգում, որ հետզհետե ավելի լավ է կարդում: Բայց շարունակում էր աշխատել այդ ուղղությամբ:

Հետո մի օր դպրոցում նրա ուսուցչուհին ասաց. «Կեցցե՞ս: Անհավատալի է, թե որքան արագ ես դու սովորում:

Անդերսը հայացքը վեր բարձրացրեց տնային աշխատանքի տողերից: «Իսկապե՞ս»:

Ուսուցչուհին գլխով արեց: «Դու շատ ես առաջադիմել»:

Անդերսը նայեց իր թղթերին գրված բառերին: Դրանք շատ ավելի հեշտ էր կարդալ, քան նախկինում: Սուրբ գրությունները կարդալու նպատակը նույնիսկ օգնել էր նրան ավելի լավ սովորել դպրոցում:

Երբ նա տուն եկավ, վազեց վերև՝ կարդալու իր սուրբ գրությունները: Երբ նա նայեց էջին, բառերը դեռ խառնվում էին: Բայց արդեն ավելի հեշտ էր հասկանալ, թե դրանք ինչ են ասում:

Անդերսը ոգևորված էր այդ երեկո սուրբ գրությունների ընտանեկան ուսումնասիրության սպասումով:

«Հայրիկ», - ասաց նա: «Կարո՞ղ եմ կարդալ այսօր»:

Հայրիկը ժպտաց: «Ուրախ կլինենք, որ կարդաս»:

Անդերսը ուշադիր հետևում էր, երբ նրա եղբայրներից ու քույրերից յուրաքանչյուրը կարդում էր մի հատված: Երբ հերթը հասավ իրեն, նա դանդաղ կարդաց հատվածը, որպեսզի ճիշտ արտասանի ամեն մի բառը: Կարդալուց հետո նա հայացքը բարձրացրեց: Բոլորը ժպտում էին նրան:

Չնայած նա կատարյալ ընթերցող չէր, բայց հպարտ էր իրենով: Նա գիտեր, որ ջանասիրաբար աշխատելու դեպքում Երկնային Հայրը միշտ կօգներ իրեն: ●

ՆԱՄՊԵՏԸ՝ ՋԵԼԻ ՍՄԻԹ